



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2019

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 103

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ

Օրհնաբանէ Տէրը, ով իմ անձս,
եւ մի՛ մոռնար անոր բոլոր պարգեւները:
Ան է որ կը փառէ բոլոր մեղքերդ,
կը բժշկէ բոլոր հիւանդութիւններդ:
Ան է որ կեանքդ կը փրկէ կորուստէն,
եւ իր սիրովն ու գթութեամբը կը պարուրէ քեզ:
Ան է որ բարիքներով կը լեցնէ քու կեանքդ,
այնպէս՝ որ միշտ երիտասարդ մնաս, արծիւներուն պէս:
Ինչպէս հայր մը կը գուրգուրայ իր զաւակներուն վրայ,
այնպէս Տէրը կը գուրգուրայ իրմէ ակնածողներուն վրայ,
որովհետեւ ինք լաւ գիտէ մեր կազմուածքը,
եւ չի մոռնար որ հողեղէն ենք:

ՆԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ
ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ
10:1-25

ԿՈՎՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՃՇՄԱՐԻՏ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ (10:1-11)

«Բոլոր ազգերը անթլիսար են» ըլլան անոնք հեթանոս, կամ՝ հրեայ: Որովհետև հրեաներու պարագային ալ սրբով անթլիսար են: Ուստի, բոլորը անխտիր, կարիքը ունին թլիսարութեան: Այսպէս աւարտեց 9-րդ գլուխը: Մարգարէն կոչ կ'ուղղէ Իսրայէլի փանը, որ կը նշանակէ ժողովուրդին, որպէսզի լսեն Տիրոջ խօսքը իրենց համար եղած:

«Ազգերուն ճամբաները մի՛ սորվիք, եւ երկինքի նշաններէն մի՛ զարհուրիք, որովհետև անոնցմէ հեթանոսները կը զարհուրին» (2 հմբ), այսինքն՝ անոնք, որոնք չեն ճանչնար ճշմարիտ Աստուածը: Ահա կոչ կ'ուղղէ Տէրը, որ նախ ազգերուն ճամբաները չսորվին, այսինքն՝ անոնց ապրելակերպը, կենցաղը, անոնց հաւատալիքը չ'որդեգրեն, որովհետև այն ինչ սրեղծագործութեան պահուն սրեղծուեցան որպէս նշաններ, պարզապէս զանազանելու գիշերը ցերեկէն, եւ ոչ թէ զանոնք օգտագործելու որպէս պաշտամունքի առարկայ կամ մարդոց ապագան ճշդելու:

«Որովհետև ժողովուրդներու սովորութիւնները, այսինքն՝ անոնց կրօնական հաւատալիքները, ունայնութիւն են, որովհետև անոնք կը պաշտեն այն ինչ որ ձեռագործ է, անշարժ, անխօս, եւ չի կրնար քալել: Ուստի ինչո՞ւ անոնցմէ վախնալ, որովհետև անոնք չարիք չեն գործեր, ոչ ալ բարիք» (3-5): Անոնք բոլորն ալ շինծու են, մարդու ձեռագործն են, փայտ են ու արծաթով եւ ոսկիով ծածկուած: Բայց Եհովան է ճշմարիտ ու կենդանի Աստուածը, ու յաւիտենական թագաւորը, ազգերու թագաւոր է, որմէ բոլորն ալ կը զարհուրին, որովհետև Ինքն է սրեղծիչը երկնքին ու երկրին, իսկ միւս բոլոր չաստուածները պիտի կործանին (6-11 հմբ): Ազգերու թագաւոր է, որ կը նշանակէ միայն Իսրայէլինը չէ, այլ՝ համայն մարդկութեան: Հերաքրքրականօրէն, այս վերջին համարը քաղղեարէն գրուած է եւ ոչ եբրայերէն, մի գուցէ այն փրամաբանութեամբ, որ երբ արդէն ժողովուրդը գերի փարուած Բաբելոն, եւ հոն երկար ժամանակ մնալէ յետոյ, անշուշտ թէ նաեւ պիտի սորվէր այդ լեզուն, եւ ահա իբրեւ վկայութիւն ըսելու համար թէ, այն աստուածները որոնք երկինքն ու երկիրը չշինեցին, պիտի կործանին:

ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ ՄԸ (10:12-16)

Այս բաժինը փառաբանութեան բաժին մըն է ուղղուած Աստուծոյ, թէ Ինքն է սրեղծիչը, արարիչը ամէն գոյութեանց, որոնք հաստատուեցան Իր իսկ գորութիւնով, իմաստութեամբ եւ խորհուրդով: Իսկ այս բոլորի դիմաց կուռքերը ուրիշ բան չեն եթէ ոչ ոչնչութիւն, ունայնութիւն: Երբ Արարիչը այցելութեան գայ անոնք բոլորն ալ պիտի կորսուին: Իսկ Յակոբին բաժինը ուրիշ է, Յակոբը այս պարագային՝ անոնք են, որոնք հաւատարմութեամբ իրենց կապը պիտի պահեն Աստուծոյ հետ, ուստի այդպիսիներուն բաժինը փարբեր է, անոնց ժառանգութիւնը Տէրն է, որ կը կոչուի Եհովա Մաբաուվթ, որ կը նշանակէ՝ գորութիւններու Տէրը:

ՄՕՏԵՑՈՂ ԱԶՍՈՐԸ (10:17-25)

Աստուծոյ փառաբանութիւնը ընելէ ետք, մարգարէն կը վերադառնայ իր նիւթին, անգամ մը եւս յիշեցնելու թէ ինչ կը սպասուի Իսրայէլի ժողովուրդին, այն մեծ հարուածը որ պիտի գայ: Բայց այդ հարուածին փակ, ահա մարգարէն ինքզինք նմանցելով ժողովուրդին, իր ողբը կ'ընէ, անդրադառնալով, որ այս պարահաճը ցաւ է, որ պէտք է կրէ, իբրեւ հետեւանք իր, այսինքն՝ ժողովուրդին անհաւատարմութեան (19 հմբ): Բայց կը խնդրէ Աստուծմէ, որ բարկութեամբ չըլլայ թէ սպառէ, այլ՝ ողորմութեամբ կը խնայէ զիրենք, այլապէս ոչ ոք կրնայ ապրի: Այլ Դուն է որ կ'արքօնես, որ այս բոլորը պարահին, բայց նաեւ ողորմէ մեզի: Խրաբէ մեզ, բայց չափաւորութեամբ, եւ ոչ թէ բարկութեամբ (24 հմբ): Ինչպէս պիտի ըսէ Ներսէս Շնորհալի հայրապետը. «Արդարութեամբ մի՛ դարբեր, այլ գթութեամբ քաւէ մեր յանցանքները»: Հապա, «քու սրբմտութիւնդ քեզ չճանչցող ազգերուն վրայ թափէ» (25 հմբ): Զարմանալի արքայայտութիւն մըն է, բայց անոր մէջ կայ ուրիշ երեւոյթ մը: Այս արքայայտութիւնը վրէժխնդրական արքայայտութիւն մը չէ, հապա անոր մէջ կայ մարգարէական փրօնեալ մը, որ կը յիշեցնէ Պետրոս Առաքեալի նամակէն այն հարուած որ կ'ըսէ. «Ժամանակն է որ Աստուծոյ դարաստանի սկսի իր իսկ փունէն» (Ա Պետր 4:17), որմէ յետոյ անոնց, որոնք չեն հաւատար Աստուծոյ, այլ՝ կ'ապաւինին իրենց կուռքերուն: